

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| N N ը/կ | Գործողությունը | Ակնկալվող արդյունքը | Վերջնա- ժամկետը | Պատասխանատու մարմինը | Ֆինանսավորման աղբյուրը |
|------------|--|--|-------------------------------------|--|--|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ մշակել հստակ ծրագրեր և իրականացնել տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը | ծրագրերի հաստատում | 2014 թ. չորրորդ եռամսյակ պարբերաբար | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | ՀՀ պետական բյուջե և ֆինանսավորման այլ աղբյուրներ |
| 2. | Ապահովել ՀՀ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև համագործակցության զարգացումը՝ նախատեսելով վերջիններիս միջև տարեկան առնվազն մեկ անգամ պարտադիր հանդիպում՝ իրենց իրավասությանն առնչվող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված երկուստեք առաջարկների քննարկման համար | հարցի համապատասխան իրավական կարգավորում, հանդիպումների պարբերաբար իրականացում և դրանց արձանագրությունները ՀՀ կառավարություն ներկայացնելը | 2014 թ. չորրորդ եռամսյակ պարբերաբար | հանրապետական գործադիր մարմիններ | Ֆինանսավորում չի պահանջվում: |